Գետիշեն

Բնակչություն՝ 54

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 43 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1850 մ,
Կարգավիճակը՝ սահմանամերձ, լեռնային,

Եղել է հայկական բնակավայր: Այդ են վկայում գյուղի տարածքում գտնվող եկեղեցիների և ամրոցների ավերակները, գյուղատեղիների հետքերը: 1988 թվականից հետո այստեղ բնակություն են հաստատել Ադրբեջանից բռնագաղթված և Կապանի տարածաշրջանի բնակավայրերից տեղափոխված հայերը:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 11201 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 7934 հա, որից՝
- վարելահող՝ 7 հա, բազմամյա տնկարկ՝ 3 հա, խոտհարք՝ 52 հա, արոտ՝ 4971 հա, այլ հողատեսք՝2901 հա
- բնակավայրերի հողեր՝ 69 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 50 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝9 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 2638 հա,
- անտառային հողեր՝ 463 հա, որից անտառածածկ՝ 285 հա
- ջրային հողեր՝ 38 հա